

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.06.2016

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում:
Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան
2. 2016թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների քննարկում:
Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ամփոփվեցին 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Մասնավորապես նշվեց, որ քննաշրջանն անցկացվել է սահմանված կարգով, ըստ 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի: Շեշտվեց, որ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում առաջադիմությունը կազմել է 94.40%: 2015-2016 ուսումնական տարվա ամառային քննաշրջանին մասնակցել է 242 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ ստացել է 24 ուսանող:

Ֆակուլտետի 11 ուսանող քննաշրջանը փակել է ակադեմիական պարտքերով.

Պատմություն - պարտք ունի 3 ուսանող,

Մանկավարժություն և հոգեբանություն - պարտք ունի 2 ուսանող,

Ֆրանսերեն լեզու և գրականություն - պարտք ունի 3 ուսանող,

Անգլերեն լեզու և գրականություն - պարտք ունի 1 ուսանող,

Հայոց լեզու և գրականություն - պարտք ունի 2 ուսանող:

Ֆակուլտետի 64 ուսանող օգտվել է ուսման վճարի մասնակի փոխհատուցումից:

Ֆակուլտետի ղեկանը ամփոփեց 2015-2016 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքները:

Բուհական համակարգում կատարվող գործընթացները, փոփոխություններն ու նորամուծությունները իրենց արտացոլումն են գտել նաև Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող մասնագիտություններում:

Իրականացվում են գործընթացներ, որոնք հետապնդում են կրթության որակի բարձրացման նպատակ: Առաջին հերթին հարկ է նշել ֆակուլտետում գործող բաց, հրապարակային գործելակերպը: Դեկանատի աշխատանքները կազմակերպված են այնպես, որ ուսանողների վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալները, մասնավորապես ակադեմիական առաջադիմությունը, լինի մատչելի և հասանելի ոչ միայն ուսանողների, այլև ողջ հանրության համար:

Քննաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օրվա արդյունքները հրապարակվում են մասնաճյուղի կայքում և փակցվում ֆակուլտետի հայտարարությունների տախտակին:

Վերահսկման այս համակարգի ներդրումը ակնառու դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա:

Ֆակուլտետում թափանցիկ են իրականացվում նաև յուրաքանչյուր կիսամյակ կրթաթոշակների նշանակման և տարին մեկ անգամ իրականացվող փոխատեղման գործընթացները: Հատկանշական է, որ այս գործընթացներում լուրջ մասնակցություն են ունենում ուսանողները՝ որպես գլխավոր շահառու:

Զեկուցողը ըստ մասնագիտությունների հանգամանորեն ներկայացրեց քննաշրջանի արդյունքների պատկերը՝ ընդգծելով ձեռքբերումներն ու բացթողումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐՆԵՐԻ՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Օրակարգի երկրորդ կետի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկանի ԺՊ Ա. Ներսիսյանը: Ջեկուցողը հանգամանալի անդրադարձավ 2016թ. մայիսին ֆակուլտետում հինգ մասնագիտություններով /Պատմություն, Հայոց լեզու և գրականություն, Մանկավարժություն և հոգեբանություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն/ կազմակերպված ամփոփիչ քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը՝ վերլուծելով վերոհիշյալ գործընթացները թե բովանդակային, թե վիճակագրական առումներով: Նախ արձանագրվեց, որ դրանք ունեցել են պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողները ամփոփիչ քննություններին ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում եղել են ուսումնառության ընթացքում ակադեմիական ցածր առաջադիմություն գրանցած սովորողներ:

Ջեկուցողը շեշտեց, որ առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում.

- առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանը, անշուշտ, նպաստել են ավարտական և կուրսային աշխատանք կատարելու մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերի ձևակերպումը:

Քննական հանձնաժողովների նախագահները թե բանավոր խոսքում և թե իրենց թողած գրավոր հաշվետվություններում գոհունակություն

հայտնեցին քննությունների կազմակերպման մակարդակից և որակից: Թերություններ արձանագրվեցին, որոնք վերաբերում էին քննական հարցաշարերին և հարցատոմսերին: Մատնանշվեցին նաև այլ թերություններ, որոնք գերազանցապես ունեին տեխնիկական բնույթ: Այդ ամենը անհրաժեշտ է նկատի առնել հաջորդ տարիների քննությունների հարցաշարերն ու հարցատոմսերը կազմելիս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:*

ԼՄԵՑԻՆ.- Օրակարգի երրորդ կետի կապակցությամբ զեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի չորս ամբիոններում ժամանակին ավարտվել են դասախոսների 2016-2017թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը: Մինչ առարկաների բաշխումը բոլոր ամբիոններում տեղի են ունեցել քննարկումներ: Անհատական բեռնվածության հիմքում դրվել է գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ամբիոնների վարիչները, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ.գ.թ., դոց. Ա. Սարհատյանը: Ելույթ ունեցողները հայտնեցին, որ անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն քննարկումներից հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ըստ այդմ դասախոսները կարող են նոր ուսումնական տարվա համար կազմել անհատական զարգացման և աշխատանքային պլանները, նախապատրաստել դասընթացների փաթեթները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Ս. Խաչատրյան